ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մարտի 2023 թվականի N 369-Ն

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայտարարել պահեստազորի առաջին խմբի առաջին և երկրորդ կարգերում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ՝ երկու ամիս ժամկետով՝ 2023 թվականի ապրիլի 15-ից մինչև հունիսի 15-ը:

2. Վարժական հավաքները հայտարարվում են պահեստազորում հաշվառված քաղաքացիների՝

1) ռազմական ունակությունների կատարելագործման.

2) մասնագիտական վերապատրաստման.

3) մասնագիտական պատրաստման.

4) բարձրագույն կրթություն ունեցող ենթասպայական կազմից պահեստազորի սպաների պատրաստման նպատակով:

3. Վարժական հավաքներին ներգրավել մինչև 953 քաղաքացու, որոնցից 476-ը՝ կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի, 25-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 452-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ:

4. Սահմանել, որ վարժական հավաքներին ներգրավվում են՝

1) մոտոհրաձգային մասնագիտություններով մինչև 500 պահեստազորային, որոնցից՝ 27 պահեստազորային՝ 2023 թվականի ապրիլի 18-ից մինչև մայիսի 12-ը ներառյալ, 215 պահեստազորային՝ 2023 թվականի ապրիլի 19-ից մինչև մայիսի 13-ը ներառյալ, 258 պահեստազորային՝ 2023 թվականի մայիսի 10-ից մինչև հունիսի 3-ը ներառյալ.

2) հրթիռահրետանային մասնագիտություններով մինչև 182 պահեստազորային, որոնցից՝ 10 պահեստազորային՝ 2023 թվականի ապրիլի 18-ից մինչև մայիսի 12-ը ներառյալ, 172 պահեստազորային՝ 2023 թվականի մայիսի 10-ից մինչև հունիսի 3-ը ներառյալ.

3) հակաօդային պաշտպանության մասնագիտություններով մինչև 59 պահեստազորային, որոնցից՝ 23 պահեստազորային՝ 2023 թվականի ապրիլի 18-ից մինչև մայիսի 12-ը ներառյալ, 22 պահեստազորային՝ 2023 թվականի մայիսի 10-ից մինչև հունիսի 3-ը ներառյալ, 14 պահեստազորային՝ 2023 թվականի մայիսի 17-ից մինչև հունիսի 10-ը ներառյալ.

4) կապի մասնագիտություններով մինչև 12 պահեստազորային՝ 2023 թվականի մայիսի 17-ից մինչև հունիսի 10-ը ներառյալ.

5) հետախուզական մասնագիտություններով մինչև 42 պահեստազորային, որոնցից՝ 30 պահեստազորային՝ 2023 թվականի ապրիլի 18-ից մինչև մայիսի 12-ը ներառյալ, 12 պահեստազորային՝ 2023 թվականի մայիսի 3-27-ը ներառյալ.

6) ինժեներական մասնագիտություններով մինչև 89 պահեստազորային, որոնցից՝ 4 պահեստազորային՝ 2023 թվականի ապրիլի 18-ից մինչև մայիսի 12-ը ներառյալ, 85 պահեստազորային՝ 2023 թվականի մայիսի 17-ից մինչև հունիսի 10-ը ներառյալ.

7) տեխնիկական մասնագիտություններով մինչև 32 պահեստազորային, որոնցից՝ 14 պահեստազորային՝ 2023 թվականի ապրիլի 18-ից մինչև մայիսի 12-ը ներառյալ, 18 պահեստազորային՝ 2023 թվականի մայիսի 10-ից մինչև հունիսի 3-ը ներառյալ.

8) թիկունքային մասնագիտություններով մինչև 37 պահեստազորային՝ 2023 թվականի ապրիլի 18-ից մինչև մայիսի 12-ը ներառյալ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

23.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ